

Ա. ԵԼՎԻՆ

ՅԵԿԵՂԵՑԻ  
ՅԵՎԱՐԴԻԱՏՎԱՎՈՐ ԿԻՆԸ  
ՍՈՀՄԱՆԻ ՄՅՈՒՍ ԿՈՐՄՈՒՄ

-91 - 167 -

14 SEP 2017

61:396

Ա. ԵԼՎԻՆ

ՅԵԿԵՂԵՑԻՆ  
ՅԵՎ. ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԻՆԸ  
ՍՈՀՄԱՆԻ ՄՅՈՒՄ ԿՈՂՄՈՒՄ



ՊԱՊԱԿԱՆ «ՆԱԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՆՏԵՍՈՒ-  
ՀԻՆԵՐԻՆ» ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

1931 թվականի նոր տարվա նախորդ գիշերը հռոմե-  
յական պատ Պիոս XI հրապարակեց իր նոր գրվածքը  
«Քրիստոնեական ամուսնության մասին»: Այդ գրը-  
վածքը, վոր յեկեղեցական լեզվով կոչվում է հնցիկ-  
լիկ, մի մեծածավալ աշխատություն են, միջակ գիրք  
ունեցող գրքի 50 էջով: Ենցիկլիկի հրապարակ դարձ  
գրեթե ամեն տեղ սենացիա առաջ բերեց—այն աստի-  
ճանի վայրենի թվաց նրա բովանդակությունը:

Յեկեղեցու ուսմունքը կնոջ մասին բալական լավ  
հայտնի յեն: այստեղ են՝ «կինը թող վախենա իր ա-  
մուսնուց», և՝ «կանայք հնազանդ յեղեք ձեր ամուսին-  
ներն, ինչպես տեր աստծուն», և՝ «վոչ թե այր ա-  
մուսինն ես ստեղծված կնոջ համար, այլ կինն ես ստեղծ-  
ված այր ամուսնու համար». այստեղ են նաև այնպիսի  
իմաստուն ասուցմածքները, ինչպես՝ «մի՛թե կինը եա-  
րող ե վորեն խելոք բան ասել» և՝ «ձեր կանայք յեկե-  
ղեցիներում թող լուս լինեն, վարովէնեան նրանց թույլ  
չի տրվում խոսել, այլ՝ հնազանդ լինել»: յեկեղեցու  
ամենավերջին հայրերը կնոջն անվանում եյին և՝ «մեղ-  
քի անոթ», և՝ «դժոխքի դարսպա»: և՝ «արագ ածող  
վորոն», և՝ «լծի համար ծնված», և՝ «սատանայի գոր-  
ծիք» և այլն և այլն:

Այս ամենը վազուց հայտնի «Ճշմարտություններ»  
են և այնքան հին, վոր արդեն՝ ինչպես հարկն են, մաշ-  
վել են նույնիսկ իրեն՝ յեկեղեցու ծոցում: Յեվ ահա  
դալիս և XX դարի իսպարամուների գլուխը և նորո-  
դում, մի քիչ սրբում-մաքրում, բայց հիմնականում  
հաստատում ե յեկեղեցու այդ կանոնները կնոջ մասին:

ՊԵՏԵՐԱԿԻ ՄՊՎԱՐԱՆ  
Քւավիտ 7006 (բ)  
Հրատար. № 1958  
Պատվեր № 6350  
Տիրաժ 4000



1-276591

Յեկ, իհարկն, հոռմեյական պապը չեր լինի այն, ինչ վոր ե՛, այսինքն՝ կապիտալի գործակատար, իմպերիալիզմի աղենու չեր լինի, յեթե իր հրամաններով չողներ խեղղելու աշխատավորներին և ամրացնելու կապիտալիստական հասարակակարգը: Յեկ իսկապես. ամբողջ Ենցիկլիկը—առաջին տարից մինչեւ վերջինը— զղբելի, սրահասոնության հասցնելու չափ սիրո, բարիքի, աստծու և մարդկության մասին մեղքածոր ֆրազների ծածկությունը աշխատավոր մասսաների վրա՝ ընդհանրապես և՛ գլխավորապես կանանց վրա, անողոք արշավանք գործելու փող և փչում:

Ենցիկլիկի հիմնական դրույթները հետեյալին են հանդում<sup>1)</sup>:

«Ընտանեկան կյանքը յենթագրում է այր ամուսնու իշխանությունը կնոջ և յերեխաների վրա և կնոջ պատրաստակամ հպատակությունը, կանխական հնագունդությունը այր ամուսնուն, ինչպես վոր այդ մասին ասում և առաջալը. «Կանայք թող հնաղանդ լինեն իրենց ամուսիններին, ինչպես իրենց տիրոջ: Վորովհետեւ այր ամուսինը կնոջ զլուխն ե, ինչպես վոր սրիստուը յեկեղեցու դլուխն ե» (Թաղթ յեփեսացոց, V, 22):

Ամուսնական դաշինքն անխղելի յե. այդ մասին ինքը քրիստոն և ասում չափազանց յեռանդադին. «Ինչ վոր ասոված միավորել ե, մարդը չպետք ե բաժանի» (Մատթ. XIX, 6) և ասա. «Ամեն վոք, ով արձակում ե իր կնոջը և ուրիշ կին ե առնում, չնանում ե (անհռոակություն ե անում) և ով վոր արձակված կնոջն ե առնում, նա յել ե չնանում» (Ղուկ. XVI, 18. Մատ. XIX, 9):

Ամեն մի ամուսնություն, վորի մեջ ամուսինների քմահաճույքի չնորհիվ նոր կյանք զարթեցնելու ակտը

1) Նա այնքան ցայտուն և հետաքրքրական ե, վոր մենք թուր և առաջիս մեզ մի շորք քաղցածքներ առաջ բերելու նրանից:

զրկվում ե իր բնական ուժից, աստծու և բնության որենքի խախոռումն ե. իսկ ով այդպես և վարվում, ծանր մեղքով արատավորում է իր խիղճը:

Յերեմին զանազան պատճառաբանություններ են բերում ամուսնությունն այդպես ի չար գործ զնելու պաշտպանության համար (Հղիության նախապղուչացում): Իսկ սուրբ մայր-յեկեղեցին չափազանց լավ զիտե այն իսկական վտանգները, վորոնք սպառնում են մոր առողջությանն ու կյանքին և խորապես կարեկցում ե նրանց: Ո՞վ կարող է նրանց մասին մտածել առանց ներքին կարեկցության: Բայց միայն ամենողորմ աստիճանը կիարուղանա վարձատրել նրան այն բոլոր նեղությունների վոխարեն, վոր նա հանձն ե առնում, վորպեսպի իրագործի իր մայրական բոլոր պարտականությունները: Նա կվարձատրի նրան հավիտենական կյանքում լիուլի չափով:

Խորապես ցնցում են մեզ նույնպես այն ամուսինների զանգաները, վորոնք՝ դառն աղքատության ճնշման տակ լինելով, հազիվ թե զիտեն, թե ինչպես պետք ե դաստիարակեն իրենց յերեխաներին:

Բայց չի կարելի յերեակայիլ մի այնպիսի զրություն, վորի մեջ ամուսները չկարողանային աստվածային վողորմությամբ հավատարիմ մնալ իրենց պարտականությանը և պահապանել իրենց ամուսնական վողջախոհությունը այդ խայտառակ արատից: Վորմանք պնդում են նույնպես, թե մայրը և հայրը իրավունք ունեն կարծելու յերեխայի կյանքը մոր արգանդում:

Մենք արդեն բացատրեցինք, թե ինչպես խորապես կարեկցում ենք, վոր մի մոր համար նրա մայրական պարտականության կատարումը կատված և նրա առողջության համար կամ նույնիսկ նրա կյանքի համար մեծ վտանգի հետ: Բայց բնության մեջ ի՞նչպիսի բավարար արդարացում կարող է լինել անմեղ եյակին ուղղակի սպանելու համար: Բժիշկն ել իր աղնիվ կոչման և փառքին անարժան կհանդիսանա, յեթե բուժելու պատրվակով կամ սխալ հասկացված կարեկցու-

թյունից յերկուսէց մեկի սպանությունն և կատարում...

Բոլոր նրանք, ովքեր ձգտում են մշուշով ծածկել ամուսնական հավատարմության և վողջախոհության փայլը, — պրանք այն ստանուն ուսուցիչներն են, փոքրոնք պատրաստ են ցնցելու կնոջ դեպի իր ամուսինն ունեցած հավատարիմ և Հարդական հնազանդության Հիմանները: Նրանք եմանսիպացիան (ազատադրությունը) յերեք տեսակի յեն բաժանում: «Աոցիալական», «անտեսական», «Փիդիոլոգիական» աղատադրություններն են: Ֆիզիոլոգիական եմանսիպացիա յեն ընդունում ան, փոքր կնոջը լիակատար իրավունք ե արրվում իր Հայեցողությամբ խոսափել ան բնական պարտականություններից, փորոնք բջիռում են նրա՝ վորաբես կնոջ և մոր, բնությունից: Տնտեսական եմանսիպացիան, ասում են նրանք, պիտք ե կնոջն իրավունք տա առանց այր-ամուսնու համաձայնության և մինչեւ անդամ հակառակ նրա կամքի իր սեփական զրադարձունքն ունենալու, ինքուրույն կերպով վարելու իր դորչերն ու ձեռնարկումները, ինքո կառավարելու նրանց: Վերջապես սոցիալական եմանսիպացիան ուղարկում ե աղատել կնոջը բնանեկան պարտականությունների նեղ ըրճանից և յերեխաններին ու ընտանիքին վերաբերող հոգություններից նրա համար, փորպեսզի աղատությունն առ նրա բնածիններին և փորպեսզի նա կարողանա նվիրել իրեն ուրիշ պրոֆեսիաների: և զրադարձունքների, վորոնց թվում նաև հասարակական գործունեյության:

Սակայն, այս ամենը բնավ կնոջ իրական աղատադրություն չեն հանդիսանում. այս ամենը դուք ե բանականությանը պատասխանող և վայել այն աղատությունից, փոքր համապատասխանում ե կնոջ և ամուսնու սրացան պարտականություններին: Այդ կեղծ աղատություն ե, այդ հակաբնական հավատարեցումը աղատարու հետ մեծագույն վնաս և պատճառում կնոջն իրեն:

6

ՄԵՆՔ բավականաչափ քաղվածքներ առաջ բերեցինք, բայց մենք առաջ չըերեցինք մեկ տասներորդ մասն անգամ այն «զեղեցիկությունների», վորոնք խմբված են այդ ենցիկլիկի մեջ: Բայց ի՞նչ ե նշանակում այդ, յեթե զանք խկական տերտերական ձիղվիթական մշուշից:

1. Կինը և յերեխանները պետք ե յենք արկվեն այրամուսնուն և հորը: Կինը այր-ամուսնուն ստրակվեն ե:

2. Հզուրյան ամեն մի նախազգուշացում, ինչ ելլինեն նրա փաստարկումները — մոտիվները, — մեղք ե, հանցագործուրյուն ե, ուստի և ամենակտրուկ կերպով արգելվում ե:

3. Ճիշտ այդպես ել արգելվում ե արորտը — վիժեցումը: Վայ մի սոցիալական, առողջապահական նըկուսումները և պարզապես մոր սոողուրյան և կյանքի խնդիրներ ուշադրության չեն առնվում: Ամեն ինչ «ի ձեռս աստածո յե»:

4. Խակ յերե ամուսինները բույլ կտան նման բան, այդ դեպքում պետուրյունը պարտավոր ե՝ ինչպես հարկու և, պատճել «հասպագուօնն լու», «Արդասպաններին», նրանց բլում նաև բժշկին:

5. Ամեն մի սոցիալական, տնտեսական, բնույթական և որիշ զգացուրյուն կնոջ համար՝ չի բույլարվում:

6. Ամուսնակուծուրյունն անպայմանորեն արգելված ե. պիտուրյունը պետք ե պատճի այս սրբից խախոսդիրին:

7. Ամեն մի կնոջ ծայրագույն պարտականությունն ե հնազանդ լինել յեկեղեցուն, պատին և իշխանագործերին:

8. «Քրիստոնեյական» ամուսնուրյունը. այսինքն այն ամուսնուրյունը, փոքր իմբնված և այս բոյ ու ուրիշների պահպանուրյան վրա, պիտուրյան դարիսն ե, և նրա խախոսդիրը «քաց ե անում դարպանները պէտական հեղաշրջումների և հասարակական ու մասնակիր կյանքում տեղի ունենալիք մեծագույն հանցագործուրյունների առաջ»:

7

9. Քրիստոնեական ամսաւնության հիմքերի հիմքը բազմանալու գործն է. «անեցեք և բազմացեք»:

10. Յեկեղեցու և պետության աշխատակցությունը զոյուրյուն ունեցող (կապիտալիստական) իրավակարգի ամսորասակելիության յերաշխիքն է:

Ենցիկլիկը բացառիկ պարզությամբ ցույց է տալիս, վոր յեկեղեցին կապիտալի ծառայությանն է նը-փերգած: Պատրիարքական թղթի հիմնական խնդիրներից մեկն է՝ ողջնել կապիտալին կնոջը ծննդական մեքենադարձնելու, վորը անընդհատ թնդանոթային միս մասակարարեր իմպերիալիստներից գալիք պատերազմների համար, — իսկ, ինչպես հայոնի յե, ծննդաբերությունն Արևմուտքում շարունակ իջնում է ու իջնում և արդեն սպառնում է մի շարք պետությունների այլասերման:

Նրա յերկրորդ խնդիրն է — կանոնեցնել կապիտալի յերկրների բանվորունու և աշխատավոր գեղջկունու շարունակ աճող հեղափոխականացումը և վոչ միայն սմնատել նրան հեղափոխական պայքարից, վորին նա հետզետե ավելի աշխուժորեն, ավելի յեռանդուն կերպով և մասնակցում, այլև՝ ի դեմս նրա, պաշտպանել ուսեակցիայի ամրությունը կենցաղում, բարյերը՝ ամբարտակը — հեղափոխական շարժման դեմ: Յեվլ թեպետ պատը կեղծալորաբար դեմ և արտահայտվում կանանց հետզետե աճող ներդրավմանը արտադրական կյանքի մեջ (այդ մասին հենց այժմ մենք կիսունք), նա շատ լավ է հասկանում, վոր կապիտալը չի հրաժարվի կանացի եժան աշխատանքի շահագործումից՝ հանուն քրիստոնեական իդեալների: Սակայն, նա միաժամանակ տեսնում է, վոր այդ ներդրավումը տառնում և դեպի նրա դասակարգային ինքնակիտակցության աճումը: Յեվ ահա պապական ենցիկլիկը հենց կոչված է կանոնեցնելու, ձգձգելու զարթնումի այդ պրոցեսը:

Ենցիկլիկում հրապարակ է գալիս նույնպես կապիտալի գորեղագույն ձգտումը կնոջը՝ վորպես ապա-

գայի պրոլետարների մորը, ամբողջովին տիրելու, վորպեսզի նրա միջոցով դաստիարակեն նաև նրա յերեսաներին կրոնի, հազանդության և խոհարհության վոգով:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԻՆԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՍՏՐԿՈՒՀԻՆ Ե ՅԵՎ  
ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԹՆԴԱՆՈԹԻ ՄԻՍ

Պապի յելությթը «կանանց ձակատում» բուրժուազիայի և տերտերականության ընդհանուր արշավարդիքի բազմաթիվ գրուներից մեկն է միայն Արեմուտքի աշխատավոր կնոջ վրա: Նա որհնում և այն ամենագաման շահագործությունը, վորին կապիտալիստները յենթարկում են աշխատավոր կնոջը: Նա ձգտում է ողնել նրանց ավելի պինդ քաշելու պարանի ողակը վզի շուրջը:

Համաշխարհային պատերազմը և ապա կատարական ռայիտնալացումը Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի յերկրներում ճանապարհ բաց արին կնոջ առաջ գեպի արտազգության այնպիսի ճյուղերը, վորոնք առաջ գրեթե անբաժանելիորեն պատկանում ենին աղամարդուն, ինչպես՝ որինակ, մետաղագործական, մեքենաշինարարական, ավտոմորիլային արտադրություններն են, չխոսելով արդեն գրասենյակային և դանազան ծառայությունների աշխատանքի մասին:

Ինչ-վոր մի նշանավոր փաստ հաղորդեց Դետրոյտի Ֆորդի գործարանի կոմունիստական բջիջի «Ֆորդ Ռետրիկը» լրագիրը:

Մի բանվոր, վոր մի շարք տարիներ ծառայել էր Ֆորդի մոտ և որական 6 դուցար 80 սենու աշխատավարձ ստացել, արձակվեց նրա համար, վոր «հասակի լմիտին» հասավ՝ 40 տարեկան դարձավ, յերբ «բարեբար» Ֆորդը լիմոնի պես քամված բանվորին դուրս և շպրտում: Նա վոչ մի տեղ աշխատանք դոնել չկարողացավ: Այն ժամանակ նրա կինը զնաց Ֆորդի միենուքն գործարանը և ընդունվեց այն աշխատանքին,

վոր կատարում եր նրա ամուսինը, գալիքիոնով—բուրզույով—ծակելու աշխատանքը դադարահի վրա, թաց... կես աշխատավարձով։ Վոր այդ փաստը ամենին միակ փաստը չէ, կարելի յե դատել թեկուղ հենց նրանով, վոր Դետրոյտ քաղաքը կատակով սկսեց կոչվել «*the Town*» (— նա, *Town* —քաղաք)։ Արևմուտքի և Ամերիկայի բանվորական թաղերում հետրդհետե ամերի հաճախ և պատահում այսպիսի տեսարան։ գետ վոչ ծեր, մեծ ստաժ ունեցող, վորակալ բանվոր այր-ամուսինը չուկա յե զնում ուտելիք դնելու, ճաշ և պատրաստում և յերեխաներին և պահում այն ժամանակ, յեր կինը կանդնուծ և նրա խոկ դադցահի առաջ և հենց նրա գործն և կատարում, բայց ունձկի կեսն և ստանում։

Սակայն, համաշխարհային ճգնաժամի և հրեշտավոր չափերի հասնող հոկայական զործազրկության ներկա ըրջանում շատ միջինազօր բանվորական բնուանիքներում չեն աշխատում վոչ այր-ամուսինը,

Ֆրանսիայում դեռ պատերազմի նախորյակին կանոնաց աշխատանքը աշխատանքի բնդհանուր ժամանում 20 տոկոսից ամերի չեր կարմում։ 1930 թվականին այդ տոկոսն արդեն 40 թվանշանով եր արտահայտվում։ Մոտավորապես այդպիսի յերեռույթ վերջին տարիներում նկատվում ենաւ Անդիֆայում, Գերմանիայում և Չիխո-Սլովակիայում։

Գաղտնթային և կիսազաղութային յերկրներում պատերի նույնն է։ Շանհայում, որինակ, կանայք արդյանարերության մեջ աշխատող բանվորների 50 տոկոսն են կազմում։ Կամ՝ վերցնենք Լատինական Ամերիկայի արագ ինդուստրացող յերկրներից մեկունիւրագվայր։ Դեռ միքանի տարի սրանից առաջ կնոջ աշխատանք բոլորին չեր կիրառվում ստուած մաս արդյանարերության մեջ, վորը գրեթե յերեւակող եր յերկը տնտեսության մեջ։ Ներկայումս արդյունաբե-

րության այդ ճյուղի մեջ զբաղված բանվորների 33 տոկոսը կանայք են կազմում։

Կանանց աշխատանքի միջնարերզը դարերից ի վեր համարվում եր մանածագործական, ծխախոտի և մասմբ սնունդի արդյունաբերությունը։ Մյուս ճյուղերում կանանց աշխատանքը չամեստ տեղ եր զբաղում։ Այժմ դրությունը արմատապես փոխվեց։ 1907—1925 թվականների ընթացքում կին-բանվորուհիների թիվը Գերմանիայի քիմիական արդյունաբերության մեջ մեծացավ 78 տոկ., կառչուկի արդյունաբերության մեջ—200 տոկ., մեքենաշինարարականի մեջ—475 տոկ., վերջապես ելեկտրականի մեջ—500 տոկ.։

Ֆրանսիայում 1914—1929 տարիների ընթացքում բանվորուհիների քանակը քիմիական արդյունաբերության մեջ աճեց 17 տոկ., հասնելով 200.000 մարդու, զգալի չափով առաջ անցնելով տղամարդու աշխատանքի համապատասխան աճումից այդ արդյունաբերության մեջ։

Մի չափաղանց հետաքրքրական յերեռույթ նշենք։ Կապիտալը կնոջը ներս և քաշում այնպիսի հյուզերի մեջ, ինչպիսիք են ավտոշինարարությունը, պայթուցիկ նյութերի արտադրությունը և՝ ընդհանրապես, ոպքական արդյունաբերությունը։ Պետք ե արդյոք ժամանակել, վոր այդ փաստը կապիտալիզմի սպառավիճան ընդհանուր սիստեմի անկապտելի և չափաղանց ելական մասն և հանդիսանում։ Բուրժուազիան ուղում և հնարավորություն ունենալ պատերազմի մունքնում տղամարդ սլորենտարիֆատին խրամատները շպրտելու, առանց վնաս հասցնելու աշդյունաբերությանը, զաղցյահի առաջ փոխարինելով նրան արդեն նախապատրաստված կանանց պահեստիներով։

Միասնական աշխատանքի համար կինը զգալի չափով պակաս աշխատավարձ և ստանում, քան տղամարդ-բանվորը։

Այդպես և կապիտալիստական կարգի հին և ան-

Քակտելի որնեքը : Կինը՝ տղամարդու կոնկուրենտն և  
աշխատանքի մեջ . նա եժան ուժի պահեստն է :

Լեհական բանվորուհին , վորպես կանոն , ստանում  
եւ տղամարդու առանց այն ել աղքատիկ աշխատավար-  
ձի 60 տոկոսից վոչ ավելի : Մանածաղործական ար-  
դյունաբերության մեջ տղամարդը որական 6-ից մին-  
չև 9 զլոտի աշխատավարձ եւ ստանում (1 զլոտին 20  
կոպեկ ե) , բանվորուհին— 3-ից մինչև 5 զլոտի : Գյու-  
ղատանաեսական բանվորուհին Լեհաստանում որական  
1,7—2,5 զլոտի աշխատավարձ եւ ստանում , աշխատա-  
վորը— 2—4 զլոտի :

Ֆրանսիայում կնոջ աշխատավարձի մակարդակը  
արտադրանքի հավասար քանակության և միակերպ  
ինտենսիվ աշխատանքի գեղքում հավասար և տղա-  
մարդու աշխատավարձի մակարդակի 56 տոկոսին ,  
Գերմանիայում— 61,1 տոկոսին , Փաշխատական իտա-  
լիայում— 46 տոկոսին : Միացյալ Նահանգներում ,  
Նյու-Յորքի նահանգում այդ տոկոսը հավասար ե  
բանվորի աշխատավարձի 50,4 տոկոսին , Ավստրալիա-  
յում— 53,6 տոկոսին , Ճապոնիայում— 36,7 տոկ. ,  
Չինաստանում— 22,5 տոկոսին : Բայց այս արդեն սո-  
վով սահմանն ե , յեթե վոչ սովո՞ն՝ ինքը : Համաշխարհա-  
յին տնտեսական ճշնաժամը , վորի ամբողջ ծանրու-  
թյունը կապիտալիստները ճգտում են զցել աշխատա-  
վորների ուսերի վրա , ել ավելի դաժանորեն վատթա-  
րացրեց բանվորուհիների զրությունը : Հրեշտակոր գոր-  
ծադրկությունը անխնայորեն հարվածում ե բանվո-  
րուհուն , կրկնակի , յեռակի յե հարվածում բանվորու-  
հուն , տան տնտեսուհուն , մորը :

Կնոջն արդյունաբերության մեջ ներդրավելով ,  
վճարելով նրան տղամարդկանց առանց այն ել աղքա-  
տիկ աշխատավարձի 2/3 , կասիտալիստը անազորույն  
դաժանությամբ շահագործում ե նրան , սովորելով իր  
մասսայուն անկաղմակերպ բանվորուհուն միշտ և ա-  
մեն տեղ 8 ժամից ավելի աշխատելու :

Ամերիկական աշխատանքի մինիստրության կեց

կանանց բյուրոյի տվյալներով , վորը հետազոտել եր  
13 նահանգներում 1709 ձեռնարկությունների մեջ աշ-  
խատող 162-792 բանվորուհու , վորի 20 տոկոսից վոչ  
ավելին որվա մեջ զբաղված ե 8 ժամ , մոտավորապես  
15 տոկոսը— 8-ից մինչև 9 ժամ , իսկ բանվորուհիների  
65 տոկոսը զբաղված ե ամբողջ որվա մեջ 9-ից մինչև  
12 ժամ և ել ավելի :

Ճապոնական բանվորուհիների աշխատանքին վե-  
րաբերող վերջին տվյալներով՝ որական մինչև 8 ժամ  
աշխատում ե բոլոր կին-բանվորուհիների ընդամենը  
միայն 4,6 տոկոսը , մինչև 9 ժամ— 7,4 տոկոսը , մին-  
չև 10 ժամ— 28 տոկոսը , 10-ից մինչև 12 ժամ— 55 տո-  
կոսը , 12 ժամից ավելի— 5 տոկոսը :

Յեկարպական մի շաբթ գլխավոր յերկրներում—  
Անգլիայում , Ֆրանսիայում , սկանդինավյան յերկրնե-  
րում— ձեւականորեն գոյություն ունի 8-ժամյա բան-  
վորական որ . բայց նա այնքան հաճախ և համառորեն  
ե խախտվում , վոր միշտ և ամեն տեղ պարզ կեղծի-  
քի— ֆիկցիայի— յե հանգում : Այդպես ե զբաղված գոր-  
ծը նաև և առաջ Գերմանիայում , վորտեղ թղթե  
8-ժամյա որը վազուց գարձավ 9—10-ժամյա : Լեհաս-  
տանի մասին աշխատանքի տեսուչ Կրախելսկայայի  
հեղինակավոր վկայությունը կա , վորը հայտարարել  
ե , թե «կոճի մանածագործական ֆաբրիկաների մեծ  
մասի մեջ ճաշելու համար ընդմիջում չկա , ճիշտ այդ-  
պես ել չկա 8-ժամյա բանվորական որ» :

Կատարի ագիտացիա տանելով ծննդաբերության  
բարձրացման համար , վիժեցումների համար պատիժ-  
ներ տալով , պրոլետարական կոնցը ծննդաբեր մեքենա  
զարձնելով , կապիտալը միաժամանակ մինիմումի յե  
հասցնում հոգացողությունը հզության և սնուցման  
շրջանի մասին , վորովհետև այդ թանգ ե նստում , փող  
արժիք : Ճիշտ ե , մի շաբթ պետություններում դանա-  
զան տեսողությամբ արձակուրդներ են սահմանված  
նախքան ծնունդը և ծնունդից հետո , սակայն պարա-  
պուրդ ժամանակի վճարումն ամբողջապես կամ մասի

Էակի չափով կտրելու ժամկե բարձր ժեկառությունը  
բուրգուաղիայի այդ «առատաձեռնությունները» ի չիք  
ե դարձնում :

Առանձնապես պետք ե նշել կապիտալիստական  
ռացիոնալացման աղդեցությունը կնոջ որդանիզմի  
վրա : Համբուրգի ժողովրդական առողջապահության  
գերատեսչության դիրքետոր, գերմանական բուրժուա-  
կան պրոֆեսոր Շվարցի վկայությամբ, ինդուստրիալ  
բանվորութիւնների մեռած-ծնված յերեխաների թիվը  
ներկայումս միջին հաշվով հինգ անգամ տվելի յև աղ-  
դաբնակչության մյուս դասակարգերում մեռած-ծն-  
վածների թվից : Այսուհետեւ Գերմանիայի բանվորու-  
թիւնների մեջ տուրերկուլյողով հիվանդացողների քա-  
նակը վերջին յերկու տարվա ընթացքում մեծացել է 88  
տոկոսով : Այդ բանն ուզգակի արդյունք ե աշխա-  
տանքի հսկայական ինստենսիֆիկացիայի և կենսական  
մակարդակի ընդհանուր իջեցման՝ կապիտալիստական  
ռացիոնալացման պայմաններում : Նրա մյուս ար-  
դյունքն ե հանդիսանում գերախոս դեպքերի, վերքից  
տուաշցող վնասվածքների, «ըսկերի» քանակության  
չափաղանց բարձրացումը : Կանանց աշխատանքի  
պաշտպանությունը՝ վորպես այդպիսին, փաստորեն  
իր վախճանին, մինիմումին ե հանդում :

\*\*\*

Սակայն աշխատավոր կանանց մասսաները պետք  
են կապիտալին վոչ միայն իրրե հսկայական շահույթի  
աղբյուր, իրրե գործիք բանվոր դասակարգի կենսա-  
կան ընդհանուր մակարդակն իջեցնելու համար . իմ-  
պերիալիստները նրանց մեջ տեսնում են նաև թնդանո-  
թային լավորակ միս :

Տեսդորեն սպառազինվելով նոր պատերազմների  
և ինտերվենցիայի համար, իմպերիալիստները կանանց  
մասսաներին ել մտցնում են սպառազինման ընդհա-  
նուր սիստեմի մեջ : Հենց այդ նպատակով նրանք նրան  
ներգրավում են ուղղմական արդյունաբերության մեջ.

այդ իսկ նպատակին են ծառայում նաև կնոջ ուղղմա-  
կանացման մանրակրկիտ մշակվող և իրազործվող պլան  
ներն Արևմուտքում և Ամերիկայում : Զուտ կանանց  
ուղղմական կազմակերպությունների, խմբակների,  
ուղղմական բանակների և այլն և այլն հոկայական  
ցանց գոյություն ունի, վորտեղ կանայք, առավելա-  
պես յերիտասարդությունը, սովորում են ուղղմական  
գործը, վորտեղ պատրաստվում են ուղղմական պա-  
հետինները : Նման գործունեցություն առանձնապես  
լայն չափեր և ընդունում Արևմուտքի մեր հարևաննե-  
րի մէջ, մասնաւորապես Լեհաստանում, Ռումինիա-  
յում . սաստիկ զարգացած ե այն նաև Գերմանիայում :  
Սակայն, չկա մի կապիտալիստական յերկիր, վոր այդ  
գործին նշանակալից չափով ուշադրություն չհատ-  
կացներ :

Լեհական կնոջ ուղղմականացման խնդիրը հանձնը-  
ված ե թե ընդհանուր (յերկու սեփի համար) և թե հա-  
տուկ կանանց կազմակերպություններին : Այդպիսին ե  
«Յերկրի ինքնապաշտպանության համար կանանց  
պատրաստման միացյալ կոմիտեն» : Այդ «կոմիտեն»  
նկատի ունի թե քաղաքային և թե գյուղական մասսա-  
ներին : Նա աշխատում է ուղղմական մինիստրության  
անմիջական դեկավարությամբ (այսինքն՝ Պիլսու-  
դոկու) : «Ստրելեց» միությունը՝ յերիտասարդու-  
թյան ամենահզոր և բարձրամարդ ուղղմական կազմա-  
կերպությունը (պաշտոնական տվյալներով՝ 300.000  
մարդ)՝ կանանց մեջ աշխատելու համար կանանց հա-  
տուկ բրիգադներ, բաժիններ ստեղծեց : Կնոջ ուղղմա-  
կան պատրաստության գամբնթացքը «Ստրելեցի» մեջ  
կազի ծառայության յուրացումն ե, գիվերսիոն աշ-  
խատանքը (այսինքն՝ լրտեսությունը), սանիտարա-  
կան նախապատրաստությունը և ագմինիստրատիլ-  
տնտեսական աշխատանք ճակատում և թիկունքում :  
Այդ «մասնագիտություններից» ամեն մեկը յենթա-  
դրում է ուղղմական գրադիտության ընդհանուր հի-  
մունքների սկզբնական պարտադիր ուսում : Գլխավոր

աշխատանքը սովորաբար տարվում ե ամռանը, առանձին ուղմական բանակներում. իսկ ձմռանը՝ առանձին զորանոցներում:

Գոյություն ունի նույնպես «Զիավոր կանանց միություն»— հատկապես կանանց ուղմա-ուղորտացին կազմակերպություն և ուրիշ շատերը, վորոնք ապրում են և վատ չեն ապրում լեհական կապիտալիստների միջոցներով և յենթարկվում են դժվարոր հրամանատարության:

Վաղուց չե, վոր Լեհաստանում նույնիսկ որենք հրատարակվեց կանանց ընդհանուր զինվորակոչության մասին՝ պատերազմի դեպքում:

Գերմանիայում կնոջ ուղմական դաստիարակությունը նույնպես չափազանց լայն չափերով և տարվում. այդ գործը վարում են հայտնապես թէ՛ ֆաշիստական և ազգայնական միություններն ու կուսակցությունները, ինչպես և՝ այսպես կոչված, «Ճախիրը», հանրապետականները, ինչպես «Մելիխսբանները», վոր դեկավարում են սոցիալ-դեմոկրատները: Կանանց ֆաշիստական ամենախոչըր կազմակերպություններից մեկը «Լուիզա Բագուհու միությունը», վորը ալելի քան 100.000 անդամ ունի, համառին թափանցում ե ձեռարկությունները, հանդիս դալով ազգային ֆաշլիդի դեմագոգիական լոգունզներով, զինվորագրելով առավելապես յերիտասարդ բանվորութիւններին «աստծու և հայրենիքի» համար:

Կնոջ ուղմական դաստիարակության խնդիրներին մեծ ուշադրություն ե հատկացնում նույնպես իտալական ֆաշիզմը, գլխավորապես իր պատունեկական կազմակերպություններով, վորոնք սկզբավիկավորներին առանձնապես բարեհույս են թվում քաղաքականապես:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում այն ոստարություն, վոր քաղաքացիանալ (ամերիկական քաղաքացիություն ընդունել) և շանկանում, պետք ե նախապես դրական պատասխան տա ձեւական պարտավորությամբ

վավերացրած Հարցին, թե նա պատրա՞ստ ե արդյոք զինքը ձեռքին «Հայրենիքի պաշտպանության» համար վոտքի կանգնել, նրա կոչ անելու դեպքում:

Դժվար չե զարծյալ այդպիսի որինակներ տասնյակները բերել: Սակայն այսքանով բավականանում ենք: Սիր մեր նապատակն ե տվյալ բովելում ցույց տալ, վոր աշխատավոր կինն իր մասսայով բուրժուազիայի համար վոչ միայն բանվորութիւնի յէ հանդիսանում, այն եւ հետզհետե աճող տեսակարար կշռով ուղղուալացվող արտադրության մեջ, այլև պապայի գինմօր, վորին հետագայի իմպերիալիստական պատերազմում, հետագայի ինտերվենցիայում և ՍՀՄ գեմականին յեռագիծ հրացանը, զնդացիրը, ուղմանամթերքը: Յեկ այնուամենայնիվ աշխատավոր կինն ավելի յե, քան այժմյան բանվորուէին և մատիկ ապագայի իմպերիալիստական բանակի զինվորը. նա միաժամանակ նաև մայր ե, ամուսին ե, պրոլետարի քույրն ե և նրա ազգեցությունը ընտանիքի վրա իշարկե հսկայական ե: Զե՞ վոր յերեխանների դաստիարակությունը բանվորական ընտանիքում հենց նրա ձեռնումն ե գտնվում:

\*\*\*

Այս ամենը իր սմբողջությամբը վերցրած դրդում ե բուրժուազիային նվաճելու, ավելի հիշո՞ւ պահելու, աշխատավոր կանանց մասսաներին իր անկոնտրուանդամենալի ազգեցության տակ: Հմտորեն և սուր կերպով, թեպետ մի փոքր կոստարար, արտահայտեց այդ պահու դաստիարակի մի չար՝ բայց իսկոք թշնամին, բանվոր դաստիարակի մի չար՝ ասաց. «Բանվորունու դաստիարակությունը մեր՝ պատիտալիստաներիս համար ցանկալի վոգով, մեր պատիտալիստի արդեն մոր արգանցանելը»:

Այստեղից բառում ե ուրծաւաղիայի տված սոցիալական պատերազմը պաղապահապես կապիտալիստական հասարակությունը անդամական բանվորունուն,

մորը և բանվորի կնոջը, նվաճել աշխատավոր կնոջ «հողին», նրան ստրուկ դարձնել Փարբիկայում և հանքահորում, անտրոտունջ դինվոր՝ «հոգով ու մարմնով» նվիրված դոյլություն ունեցող բուրժուական, հասարակակարգին:

Այդ հսկայական պատվերի կատարումը հանձնարարված է գլխավորապես բուրժուադիայի յերկու ամենահամարարիմ և ամենաժիր ազենտներին—սոցիալ-ֆաշիզմին և յեկեղեցուն: Նրանցից ամեն մեկը այդ դործը վարում է «ամենաազնիվ» կերպով և իր ձեռով, բնակի կոնկուրենցիայի մեջ չմտնելով իրար հետ: Ընդհակառակը, միշտ և ամենուրեք այդ յերկու գործակատարները աշխատում են կոմպանիոն սկզբունքներով, միասնաբար աշխատելով, վորագեղի արժանահան իրենց խողյալին-կապիտալի դովասանքին: Այստեղ, այս դրույկի մեջ մենք դրադվում ենք՝ սակայն, կապիտալի արդ նեցուկներից միայն մեկով—տերտերականությամբ, յեկեղեցիով:

### ԿԱՆԱՆՑ ՏԵՐՏԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կնոջ «հոգու» վրա արշավելիս՝ յեկեղեցին ալշեցուցիչ ճկունություն և հայտնաբերում: Նա խրվում և բանվորական կենցաղի բոլոր ծակուծուկերը: Նա աղդում և յեկեղեցիներում քարոզներ տալու միջոցով: Նա ուղարկում և տերտերներին բանվորի մոտ նրա տունը, վորպեսզի «միխթարեն» թշվառացած պրոլետարիներին: Նա բուրժուազիայի կապիտալով սանդում և վսեմաշուք, ճյուղավորված կազմակերպություններ, վորոնք հաճախ սքողված են լինում աշխարհական դիմակով: Նա դաստիարակչական աշխատանք և տանում դպրոցներում, թե ընդհանուր և թե հատուկ դպրոցներում: Նա զբաղվում է՝ այսպես կոչված, բարեգործությամբ: Նա կանանցից արհեստակցական միություններ և կազմակերպում, լրադրեր և հանդեսներ և հրատարակում, մեկ խոսքով՝ նա տեր ու տնորեն և մի ամենաաքանչելի, ճկուն և նենգավոր, ճիղվիթորեն

հարտար, շատ հարուստ տպարտի, վորը թումավորում է բանվորների զիտակցությունը հոգեսոր ցքիով (վատորակ ողի):

Բայց կրոնը ինքնամպատակ բան չի հանդիսանում: Կրոնը մի միջոց է, վորի ոգնությամբ բուրժուազիան և յեկեղեցին հավատացյալ մարդուն կապիտալի և նազարեն ստրուկն են դարձնում: Այս բանը մեկ անգամ արտահայտեց չեխական յեղիսկոպոս Լեյտերմիցը: «Ճշմարիտ քրիստոնյան միշտ լավագույն հպատակն ե»:

Յեկեղեցականներն ել զբաղվում են այդպիսի «լավագույն հպատակների» Փարբիկացիայով:

Յեկեղեցին հսկայական չարաշահության առարկայի դարձնում աղքատությունը, լքվածությունը, բանվորունու անգիտակցությունը: Նա ներկայանում և աշխատավոր կնոջը վորպես բարերարուհի, պաշտպանուհի:

Այդ բանը կատարվում է բավական պարզ կերպով: Որինակ՝ Գերմանիայում գոյություն ունի «Փթության կաթոլիկական միություն», «Կարիտատ» և «Կենտրոնական կոմիտե ավետարանական յեկեղեցու ներքին միսիայի համար»: Գոյություն ունի նաև «Հենրիկ կաթոլիկ և թե՛ ավետարանական կանանց «Ազատթե՛ կաթոլիկ և թե՛ ավետարանական կանանց «Ազատթե՛ կաթոլիկ կանանց համար բարեգործություն» անվան տակ: Դրանք հսկայական հիմնարկություններ են, վորոնք միացնում են զրեթե միլիոնավոր անդամների: Նրանք բանվորուհիների և զործազորդի կանանց համար բաց են անում հիմնադանոցներ, դպրոցներ, ամբուլատորիաներ, ճաշարաններ, կազմակերպում են ամառային ճամբարներ, սպասարկում են կարիք ունեցող կանանց՝ տներում: Մեկ խոսքով, նրանք իրք ուղղում են «գոյություն ունեցող հապարակակարգի անարդարությունները»: Նրանք միշտ չուներ են ստանում մասնակիուններ, պետությունից, վորն այդպիսով խրախուսում են նրանց տերտերական աշխատանքը, բայց գլխավորապես— մասնավոր

Ճերից, «բարեգործներից»: Դրա համար ել այդ կազմակերպություններում դիմավոր դեմքը՝ տերտերի կողին, հանդիսանում է ականավոր, գեր տիկինը, մինիստրի կամ ստատո-սեկրետարի կինը, գեներալշանկամ բարեպաշտ պրոֆեսորուհին, գամա-պատրոնեսան, վոր իրեն աստծուց նշանակված է համարում տանջվածների արտասուժները սրբելու համար: Այն հսկայական չահույժներից, վոր նրանք գուրս են քաշում հենց այդ «բարերարվող» մասսաների շահագործումից, խզուեկ զոռներ հատկացնելով, նրանք վրքվում են իրենց սարսափելի մեծահոգությամբ, իրենց անչափ բարությամբ և առատաձեռնությամբ և իրենց աղայական սեղանից շալրտված վոսկորի փոխարեն պահանջում են ստրկական քծնանք, շան անձնվիրություն՝ աստծուն և իրենց:

Այդ նրանց մասին, «Փիլանտրոպների» այդ զըդվելի կեղծալոր տեսակի մասին այնպես կծու կերպով զբում եր կ. Մարգար գեռ 1847 թվականին.

«Ֆիլանտրոպները կամ մարդկության բարեկամները, — դրանք այն պարուններն են, վորոնք կամ յեկամտարեր պաշտօններ ունեն, վոր առատորեն վարձատրվում են ժողովրդական զրապանից կամ տեր են ժողանդությամբ կամ չարաշահությամբ — սպեկուլյացիայով — ճեռորդ բերած կարողության, վորը նրանց տարեկան 5, 10, 30 և ավելի հազար տալեր յեկամուտ ե բերում: Բոլոր այդ պարունները, առանց բացառության, պատկանում են այն դասակարգին, վորը վոչ միայն ազնվորնեն ուրիշ աշխատանքի հաշվին ե սընվում, այլև ապրում ե հիմնալի կահավորության մեջ, զերազանց խոհանոց ե պահում, գինիներից բան ե հասկանում, նուրբ և չքեզ հաղնվում ե, կուրորտներ ե դնում, վորորդական տոնակատարություններ ե սարցում, գյուղական խաղաղ առանձնության մեջ կամ իր հայրենի քաղաքում մեկ կամ միքանի սիրուհիներ ե պահում, ողնում ե որենքներ թխելուն, մեղրահոսքաների վտակներ ե հոսեցնում բարոյականության

մասին, գիտցիպլինի և կարգուկանոնի մասին և ամենից ել ավելի խաղաղություն և հանդիսան ս սիրում: Ինչ վերաբերում է այդ պարունների արտաքինին, նկատված ված և, վոր կամ ընկած փորը և յեռահարկ կդակը առանձնապես տրամադիր են գարձնում ֆիլանտրոպիւայի կամ մարդասիրության»:

«Կարիտատի» Փիլանտրոպները սկզբունքորեն ողնում են միայն «բարեկամաց» ընտանիքներին և կտնանց: Գթության պետք է արժանանալ բարի վարքով, ճշտապահությամբ յեկեղեցի հաճախելով, յերեխաների պարկեցած գատիւրակությամբ: «Կարիտատ» ընկերության բացած ճաշարաններում զործադուրկ կատարական սեյք պարտական են վորպես բենվածություն — ոյն ել վոչ թեթև բեռնվածություն — լսել տերութական քարոզները: Այդ ընկերություններին կից չքավոր աղջիկների համար բացված արհեստակացական դասրնթացքները գործնական ուսուցման դասերը փոխեփոխ են առվիս նախախնամության, աստվածային չնորհի և ավետարանի «թեորիաների» հետ միասին: «Այդ ըստեգործական ընկերությունները, — զրում ե Արեմուտքի կանանց շարժման հետազոտող կին ընկ. Աւեմսանդերը, — հազարավոր թելերով կապված են կյանքի հետ, լայն մասսաների, առանձնապես կանանց առորյա կարիքների և պահանջների հետ. նրանք զրունվում են ամենաբարենպաստ զրության մեջ նրա համար, վորպեսզի անարգել կերպով ազգեցություն զործեն նրանց վրա: Նրանք իրենց ողնությունը շաղկապում են կրոնական մխիթարության հետ: Ոպիում ժողովրդի համար — ահա նրանց դեղ ու դարմանը: Նըզովրդի համար — ահա նրանց դեղ ու դարմանը: Նըզովրդին անականաբարություն և սեակցիոն աշխարհայացք են պատվաստում և կապում են իրենց հետ կանանց՝ իրենց ցույց տրված չնչին ողնության միջոցով, ինչ բան ել վոր այդ ողնությունը աննշան բնույթ ունենալու:

Բայց տերտերական բարեգործական կաղմակերպություններ— այդ միայն յեկեղեցու աշխատավոր կանաց մեջ։ Նրանցով բնալ չեն սպառվում կանաց յեկեղեցական կաղմակերպությունների ամբողջ բաղմազառությունն ընդհանրապես հուրժուալիան յեկեղեցու միջոցով հատուկ կաղմակերպություններ և ստեղծում, վորոնց մեջ բանվորուհուն հնարագորություն և տրվում իրք թե հասարակական աշխատանք տանելու։ Հարկ չկա մատնաշելու, վոր այդ բանը համատարած խարերայությունն է, բայց հենց այդ խարերայության վրա յե կառուցվում՝ այսպես կոչված, կանաց բրիտանիական բանվորական շարժումը։ Այդ կաղմակերպությունները գոնք նրանց զդալի մեծամասնությունը— կառավարվում է իրք քե բանվորուհներով՝ իրենցով, ինչ շափով վոր վարչության մեջ բանվորուհներ են նստած։ Նրանք գոյություն ունեն իրք քե բանվորուհների՝ իրենց հաշվին, ինչ չափով վոր գոյություն ունեն անզամավճարների հաշվին։ Մեկ խոսքով, դա— իրք իրք քե բանվորուհների կաղմակերպություն է։ Բայց իսկապես իրք քե ։ Կուլիսների հետևում զործում ևն Փարբիկանանները և զործարանատերերը ի դեմս իրենց կանաց և տերտերների։ Անզամավճարները բավական չելին լինի նույնիսկ քարտուղարին վճարելու համար, վարչության մեջ նստած բանվորուհները բուրժուատական առաջ քաշվածներն են, վորոնց դամապատրոննեսանները դրել են բարձր դիրքի վրա՝ հատուկ հնազանդության և բարեպաշտության համար։ Այդ կաղմակերպությունների ձեռնարկած կարուծեակի դասրնթացները կամ տնտեսարար տնարարության պարագաների առանձնարանների գործում են շատ հաճախ պարոն Փարբիկանանները, յերեմն ել Փարբիկաններում, գրասենյակների չենքրում։ Մի՞թէ

հարկ կա տարակուսելու, վոր մտերիմ մոտիկություն դոյլություն ունի այդ «բանվորուհների միությունների» և կապիտալիստների միջև։ Առենք, այդ բանը չեն ուի ծածկում։ Մինչդեռ այդ միությունները հսկայական են։

Վերցնենք այդ տեսակ միությունների և կաղմակերպությունների դասական յերկերը— Գերմանիան։ Ալգոլիսի կաղմակերպությունների ցանկը գլուխվորում է «կաթոլիկական մարքերի միությունը», վորը շրջանակին կաղմակերպություններով և ճյուղավորված, 641 հաղարի հասնող անդամների թվով։ Առանձին կաղմակերպություն և ստեղծված աղջիկների համար «Գերմանիաի աղջիկների կաթոլիկական Փետրայնների կենտրոնական միություն», վորի վարչությունը գտնվում է Գյուսելգորֆում, ամենախոշոր արդյունաբերական կենտրոնում։ Այդ միությունը բարեկան բանակությամբ հանդեսներ և հրատարակում 400.000-ից ավելի բնդհանուր տիրաժով։

Այս յեխաֆանների շարքում գոյություն ունեն նույնական դուռ յեկեղեցական տիպի փոքր կաղմակերպություններ՝ Բամբարիայում, Վուլուներեգում և Բագենում— «կաթոլիկական կանանց Փերանների հարաբերամանական միություն» Մյունիեն կենտրոնում։ Բերինում ակտիվություն է հաւանաբեկներունուով։ Այսպիսում աղջիկների կաթոլիկական միություն «Անհատամոր աղջիկների նպատակն է— 14-ից թունը» 8000 անդամով, վորի նպատակն է— 14-ից մինչև 20 տարեկան հասակի յերիտասարդ կանանց կրոնական դաստիարակություն տալը։

Առանձնապես պետք է նշել այն բնդհանուր յերկու կաղմակերպությունները, վորոնց մեջ կնոջ թիվը գերազանցում է։ Առաջիսի միություններ և Փերաններ հակառական թիվ են կաղմում։ Առաջիսի են անհամար կիսավանական կաղմակերպությունները, ինչ պես «Յերոռոռ որդենի», «Ալգոթքի Փերայնի» կաղմակերպությունները և այլն։

Կան դարձյալ կանանց հատուկ միսիոներական 23

կաղմակերպություններ, վորոնց նպատակն է տուրածել կաթոլիկությունը, վորովես զործիք Գերմանիայի խմբերի ավագանական հզորության ամրացման. այդպիսին և, որինակ, «կաթոլիկ կանանց և աղջիկների ֆերայնը կենտրոնական-աֆրիկական ժիշտաներին աջակցելու համար», 10.000 անդամով։ Կրոնի ծածկութիւնակ նրանք խմբերի ավագանական ուժեղ պրոպագանդայն մզում Գերմանիային վերադարձներու այն գաղտնթներո, վոր խլել են նրանից Վերսայի դաշնագրի ուժով։

Մարդասիրական և յեկեղեցական ընկերությունների շարժում, վորոնք ըստ եկության այնքան աշխատավոր կնոջ կաղմակերպություններ չեն, վորքան բուրժուական կաղմակերպություններ, վորոնք ստեղծված են նրան «սպասարկելու» համար, դայություն ունեն նաև արհեստական միություններ, վորոնք իրենց կազմով գրեթե ամեն տեղ պրոյետարական են։

Որինակ՝ տնային ծառաների բաժական մեծ թվով ֆերայններ կան, վորոնցից հիշենք «Գերմանիայի տընային ծառա կաթոլիկ կանանց արհեստական միությունը» (կենտրոնական կոմիտեն Բերյինում։ կենտրոնական որդանը՝ «Խոհանոց և տուն», 4000 անդամով). «Տնային ծառա կաթոլիկ կանանց և տնային ծառայողների ֆերայնների միություն» (կենտրոնը—Մյունին, որգանը—«Տուն և ոջախ», 11.700 անդամով). «Գյուղի տնային ծառաների կաթոլիկական ֆերայն» (Մյունին, 5000 անդամով) և այլն։

Մի շարք համապատասխան կաթոլիկական կաղմակերպությունների մեջ միացած են նաև առեւտրական ծառայողները, վորոնց արդեն ել չեն թվի, և վորոնցից վորոնք մինչեւ 10.000 անդամ ունեն։ Զափազանց հետաքրքրական համար բարերական է «կաթոլիկ ծառայողների հարավ-ոերմանական միության» հրատարակած Հանդեսներից մեկի վերնադիրը. «Վոսկու պես հավատարիմ» («Երան այլ Գոլդ»)...

Արհմիութենական միությունների տիպին մոտե-

նում են նաև բանվորուհիների մի շարք ուրիշ կազմակերպություններ, ինչպես բավական խոշոր «Աշխատավոր կանանց և աղջիկների կաթոլիկական ֆերայնների միություն» և (կենտրոնը Բերլինում, 25.000 անդամով) և «Բանվորուհիների հարավ-ուրմանական կաթոլիկական ֆերայնների միությունը»։ Մյունին կենտրոնով և «Բանվորուհի» հանգեսով, վորք շատ ետարածությունով և անդամությունով։

Գերմանիայի բուրժուական կանանց «բանվորական» շարժման ամենահայտնի առաջնորդներից մեկի՝ դոկտոր Կլենսի խոսքերով միայն յերկու միությունը՝ «Մայրերի համապերմանական միությունը» և «Կաթոլիկ աղջիկների միությունը» համակարգորեն ուշխատող Դյուսելդորֆում գտնվող բնուհանուր վարչության գեկավարության տակ, մինչև 1½ միլիոն անդամ ունեն, վորոնց մեջ զգալի մեծամասնությունը աշխատավոր կանայիք են։ Ավելացրեք նաև Գերմանիայի, հետո Ավստրիայի, Զելյո-Սլովակիայի, Լեհաստանի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և այլն և այլն նման ուրիշ միությունները, այդ անզայտան չափազանց խոշոր մասսա յե կազմում։

Իհարկե, այդպիսի մասսաներին ակտիվ քրիստոնյա կանաց շարքը դնելը չափազանց շտապովականություն կլիներ։ Մենքին այդպես չեմ։ Քրիստոնեական կաղմակերպության անդամ լինել, անդամատում ունենալ և յերեւմն այդ կաղմակերպությունների «բարեկեներից» ողափել, զեռ չի նշանակում հականեղափորի կաթոլիկական կին լինել։ Զայտնի յե, վորխական և յեկեղեցական կին լինել։ Զայտնի յե, վորապետական մարտիկների շարքերից գառակարգացնելու կոփիների վերելքի բուլեներում յերեւմն պլոտելուն կաղմակերպությունների համար հոյակապ մարտիկներ են զուրս զալիս, վորոնք պայշտարով խղում են իրենց կաղերն իրենց կաղմակերպությունների հետ, սակայն թվերը ցույց են տալիս մեղ, թե վորքան մեծ ե յեկեղեցու գործունեցության թափն այդ բնադրավառում։

«Բանվորուհիների ավելացրանական ֆերայնների

միության» գրքույկում մենք տեսական դրույթներ ենք գտնում այդ միության խնդիրների մասին։ Յեթե զեն զցենք միության «տեսաբանի», վոմն Յելիզավետա Նեղելսրախի, չափաղանց առաջ բառահոսությունը ամեն տեսակի խառնախնթոր դատողություններից, այդ զեպքում մոտավորապես այսպիսի ընդհանուր կոնցեպցիա— մտապատկեր— կտանանք։

1. Մենք, այսինքն՝ ավետարանական ֆերայնների միությունս, ուզում ենք հավատարիմ մնալ քրիստոնյության և գործնականապես ապացուցել այդ մեր կյանքում, փարթիկայում և տանը։

2. Մենք ուզում ենք գործունյա, ջանամեր, իր արհեստին պատիվ քերող բանվորուհիների լինել։

3. Բայց մենք ուզում ենք նույնական հավատարիմ տնտեսուհիներ և մայրեր լինել և այդպիսիներ կողառնանք։

Ուրիշ խոսքով ասած՝ մենք ուզում ենք կտպիտալի հավատարիմ ստրկուհիները լինել— միշտ, ամենուրեք, ամեն բանում։

Յելիզավետա Նեղելսրախը նախազգուշացնում է, վոր այդ նովատակների իրազործումը հեշտ բան չեն և այդ պատճառով—իր «մեր միությունը մարտական ընկերակցություն ե»։

Նա շտապում է բացատրել իր ասածը, վախենալով՝ մի գուցե «վատ» մաքով հասկանան իրեն։ «Դա աշխատանք ստացողների դասակարգային կամ կուսակցական կոպիտ պայքար չեն աշխատանք տվյալների դեմ, այլ պայքար են սեփական անձնասիրական «յես»—ի դեմ՝ թե՛ առանձին բանվորի մեջ և թե՛ քանվորական ամբողջ դասակարգի մեջ, պայքար՝ քրիստոնեյության և յեկեղեցու համար... Այդ պայքարը որեցոր տար-վում ե խաղաղության մեջ, բանվորական դաշտյահի առաջ, ընտանեկան ոջախի մոտ և սեփական հոգու մեջ»։

Բայց վորովհետև «այդ կոիվները (?!), — շառունակում ե մեր տեսաբանը, — տեղափոխվում են նաև

ընդարձակ աշխարհը, դառնում՝ ամբողջ հասարակության գործ, ուստի մենք միացնում ենք մեր Փերայններն ամբողջ յերկրում (Գերմանիայում) և միացյալ ուժերով հանդես ենք գալիս ավետարանը քանիորական մասամբերին նիշու կերպով քարողելու համար. կյանքի, բնակարանի և աշխատանքի համար, վորոնիք կյանքի, բնակարանի և աշխատանքի համար, վորոնիք կյայելու և գերմանացի մարդուն, վորպեսդի նա կավայելու և ներքին խաղաղությունը, ընտարդանա չկորցնել իր ներքին խաղաղությունը, ընտառկան կյանքի վրկության համար»։

Սակայն «Յանվորուհիների ավետարանական Փերայնների միության» հասցեյին տարածվող լուրերը «մեղադրում են նրան սեպարատիզմի— անջատականության— մեջ, այն բանում, վոր նա ակոս և քաշում քորիսոնյանների զանազան խավերի միջև», այսինքն՝ բանվորների և ձեռնարկատերների միջև։ Նեղելսրահին բանվորների և ձեռնարկատերների միջև։ Նեղելսրահին արդարանում է. նա հայտարարում է, վոր «այդ մեղադրանքներն անարոր են», վոր Միությունը չի բաժանում բանվորուհիներին քրիստոնյանների մուս խավերից։ «Սակայն, համաձայնեցեք», — շարունակում ե նա, — վոր «վոյ մոք պախարակերի բան չի համարում, վոր ուսուցչուհիները կամ գրասենյակարին աշխատավորուհիները միանում են արեստակցական նշանով։ Վորուհիները միանում են սեփական կազմակերպություն ունենալու իրավունքից դրկենք ավետարանական բանվորուհիներին, վորոնց արհեստը լիքն ե աշխատությամբ և որկանքներով»։ Թեպետև նա ստիպված է խոսունական բաներով։ Վոր «մերկայում մեր ժողովրդի մեջ տնտեսական շահերի տարրերությունից բղխող հակասությունները իրոք այնքան մեծ են, վոր համենայն դեպս թյունները իրոք այնքան մեծ են, վոր համենայն դեպս նրանց ժխտել չի կարելի, նույնիսկ աչքերը միակերպվելու»։ Նա հենց արդեղ ունի բացատրում է, վոր միությունը ամենից ամենի ֆիշ մտադրություն ունի սույն առ համենից ամենի ֆիշ մտադրությունին պահանջները ներկասությունները դասակարգային պահանջները մեր յազմելով։ ո՞, վոր։ «Ենց մենք բանվորուհիներու մեր վրիս Միության միջոցով գալիս ենք ուսպի կինդանի քրիստոնեյությունը, գտնում ենք ամենաուղիղ ճանապարհը».

գեղի այն կամուրջը, վոր դժել և քրիստոնեյությունը  
բոլոր անդունդների վրայով և ողնում և գտնելու դե-  
պի «մեկ հոռ և մեկ Հովիվ» տանող ճանապարհը: Հենց  
այդ իմաստով ել ավետարանական բանվորուհիների  
միության խելացի անդամը այն Հարցին—թե մենք  
լինչ ենք ուզում—կապատախանի «Հայր մեր» և «Ե-  
կեսց արքայություն քո» խոսքերով:

Այդպիս և ծրագիրը դերմւհական աչքի ընկնող  
միություններից մեկի, վոր շատ հաղարավոր բանվո-  
րուհիների յէ միացնում, վորը հիմնականում զուգա-  
դիսում և մյուս նման միությունների ծրագրերին:  
Այդ ծրագիրը բանվոր դասակարգի կատարելապես  
անձնատուր լինելու ծրագիրն է: Այն մասին, թե նա  
ինչ կերպարանք և ստանում գործնականում—մենք  
կխոսենք առաջիկայում:



Քրիստոնեյական արհմիությունները հենվում են  
քրիստոսի, ավետարանի, տեր աստծու վրա: Նրանք  
ձգտում են «ասպացուցել» բանվորներին, վոր կապի-  
տայիզմի բարիքը բանվորի բարիքն է, վորովհետև թե՛  
մեկի և թե՛ մյուսի շահերը «ներդաշնակորեն» զուգա-  
դիսում են, վոր՝ համոզմունքով և քրիստոնեյական  
հեղությամբ գործելով, կարելի յէ խողյայինից ստա-  
նալ ինչ վոր ուղես, վոր տնտեսական գործադուլները  
կիրառելի լին միայն ամենաբացառիկ դեպքերում, վո-  
րովհետև վորեւ վեճ կարելի յէ Հարթել սիրով՝ քրիս-

Այդպիսին և հիմնականում քրիստոնեյական արհ-  
միությունների հնարիմաց իդեոլոգիան, — մի իդեոլո-  
գիա, վոր նրան հնագանդ հավատացյալ բանվորի ձևո-  
ւերն ու վոտքերն և կաշկանդում:

Քրիստոնեյական արհմիություններն աղջեցու-  
թյուն ունեն Գերմանիայում, Բելգիայում, Հոլանդիա-  
յում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում և Զեխո-Սլովա-

կիայում, առավելապես արդյունաբերական առանձին  
կենտրոններում:

Քրիստոնեյական արհմիությունները միջազգային  
միություններ են կազմում: Ամենից ավելի կարևորը  
հանդիսանում է 1920 թվականին ստեղծված «Արհմի-  
ությունների քրիստոնեյական խոերնացյունալլ», վո-  
րը 1928 թվականի վերջներին 2.078.360 անդամ եր  
ընդգրկել:

Քրիստոնեյական արհմիությունների չարքերում  
խոչը տոկոսով բանվորուհիներ կան: Շվեյցարիա-  
յում՝ 28 տոկոս են կազմում, Ավստրիայում՝ գրեթե  
40, իսկ Ֆրանսիայում՝ 30-ից ավելի: Գերմանիայում  
քրիստոնեյական արհմիությունների մեջ բանվորուհի-  
ների տոկոսը մի քիչ ցածր է, այսինքն՝ 18, բայց այն-  
տեղ կա զարգացած «Ծառալող կանանց քրիստոնեյական  
արհմիություն», վոր 60.000 անդամ ունի:

Շվեյցարիայում տեղի յն ունենում կանանց—  
արհմիությունների անդամների հատուկ խորհրդակ-  
ցություններ և ժողովներ, ստեղծված են կանանց տե-  
ղական հանձնաժողովներ, վորոնց խոնդիրն է կին պրո-  
լետարիատի աշխատանքի սպեցիֆիկ հարցերի ուսում-  
նաբրությունը և միությունների բարձրագույն որ-  
դաններին առաջարկություններ անելը:

Միենայն բանը նաև Զեխո-Սլովակիայում: Այ-  
պես, մանածագործների միության մեջ 1927 թվակա-  
նից սկսած կանանց հատուկ հանձնաժողով կա 5 Հո-  
գու կազմով, բանվորուհիների շահերը պաշտպանելու  
համար: Բացի դրանից, միության կենտրոնական կո-  
միտեն հատուկ ուժերենացիոն ունի բանվո-  
րուհիների աշխատանքի հարցերի համար:

Կանանց արհկազմակերպությունների կենտրոնա-  
կան միությունը (այսպէս կոչված՝ «Վանական արհ-  
միությունները») Ֆրանսիայում ստեղծվել են արդեն  
1902 թվականին վանական կույսերի ամենամռութիկ  
ժամանակցությամբ: Առաջին տարիներում նա իր ան-  
դամներին հավաքում եր գլխավորապես ուսուցչի-

ներից, ծառայող կանանցից, հիվանդապահ կանանցից և այն, սակայն, մոտավորապես 1910 թվականից սկսած նա յեռանդուն կերպով տարածում է իր աշխատանքը նաև բանվորութիւնների վրա, առանձնապես պատրաստի հագուստի արտադրության և մանածաղործական արդյունաբերության բանվորութիւնների վրա: Այդ միության մեջ ընդամենը 17 արհեստներ կան. Փարիզում և նրա ըրջակալը ըստ միությունն ունի մոտավորապես 60 արհեստական սեկցիա, իսկ զառվառում—120: Միությունը հաստարակում է իր ամսորյա որդանը—«Արհմիութենական փեթակ»: Անդամների ընդհանուր քանակը հայտնի չեն, բայց՝ ըստ յերկութիւն, չափազանց զգայի քանակություն է: Բորդո քաղաքում, որինակ, միությունը 1928 թվականին 3100 անդամ ուներ:

Գերմանիայի քրիստոնեյական արհմիություններին կից կանանց սեկցիաները աշխատում են բանվորութիւններին արհմիութենական ակտիվ աշխատանքի մեջ ներգրավել: Այդ բանը մասամբ հաջողվում է նրանո: Քրիստոնեյական արհմիությունների հայտետվությունից, 1929 թվականի սկզբներին 3082 բանվորութիւն «հասարակական բեռնվածություն» եին տանում քրիստոնեյական միությունների «արհմագով»: Նրանցից 564-ը աշխատում են վորպես Փարործիամի անդամներ, 703—անդամավճարներ հավաքողներ, 609—հիվանդանոցների գանձարկղներում, 216—վորպես ներկայացուցիչներ խնամատարության որդաններում, 131—արտպես կոչված՝ «յերիտասարդության խնամակալության» որդաններում և այլն:

Բայց այդ թվերն այնուամենայնիվ չեն դոհացնում քրիստոնեյական արհմիությունների զեկավարությանը, ուստի և բանվորութիւններին մաքսիմալ—առավելացույն—քանակությամբ հասարակական աշխատանքի գրավելու համար, կաղմակերպվում են «արհեստական զարգնթացքներ»:

Արհմուսուցումը սովորաբար տարվում է ամռան,

զբուժանքների ընթացքում, զրույցների արտավեճով և ըստ յերեսութիւն, վորոշ հաջողությամբ և ընթանում: Միայն մեկին՝ «Մանածագործների քրիստոնեյական միության» կից ստեղծված են 49 դասընթացներ բանվորութիւնների համար, զումարված են շրջանային 6 կոնֆերանսներ, տարված են բանվորութիւնների 22 միտինգներ, կանանց 3 արհմիութենական համագումարներ և այլն:

Բերդիայում արդեն 1912 թ. քրիստոնեյական արհմիությունները անջատ կազմել են կանանց քարտուղարություն, վորը ստեղծել է կանանց սեկցիաներ, վորոնք միացնում են վոչ միայն բանվորութիւններին, այլև բանվորների կանանց: Կաղմակերպվել են նաև աղջիկների հատուկ խմբակներ:

Աշխատանքը կանանց սեկցիաներում կաղմակերպված է հետեւյալ ձևով: Հիմքը կաղմում են տեղական ու աւամնական խմբակները: Այդ խմբակները միացնում են բանվորութիւնների մասը խմբեր, վորոնք կաղմվում են հատկապես քրիստոնեյական արհշարժման հիմունքներն ուսումնասիրելու համար, այդ հիմունքները ընկերությունների բանվորութիւնների մեջ քարոզելու համար, քրիստոնեյական արհմագործների միասնական ընթերցանության համար, աշխատանքի տեղական պայմանները քննության առնելու համար և այլն:

Յերկրորդ աստիճանը կաղմում են շրջանային արհմագործները: Այդքամընթացները ավելի խոշոր վայրերում տարվում են կանոնավոր կերպով շաբաթը մեկ անգամ, յերեկոները, 2-ական ժամով ձմռան ամիսների ընթացքում: Այցելությունները քաջալերվում են տրվող վկայականների, զբերելով սրբեմիանների ողնությամբ, այլև ունկնդիրների մասին արհմամուլում տպվող գովասանական վկայությունների սպնությամբ:

Դեկավարող բանվորութիւնների նախապատրաստությունը տեղի յի ունենում կենտրոնական դպրոցում, վորոնք գոյությունը պահպանվում է մասամբ պետական հատկացումների հաշվին:

ի յրուսելի կաթոլիկական կենտրոնական արհմիութենական հատուկ դպրոցում զասլնթացքները յերկամբ յն . ավարտելուց հետո դպրոց և տրվում , վորր մի շարք իրավունքներ և առաջի : Այսպես, ունկնդրուչիները անմիջապես գանում են աշխատանքի տեսչուհիները և աշխատանք են ստանում ձևանարկություններում , վորտեղ ծախում են իրենց աշխատանքը , վորպես քրիստոնեական արհմարժման վոչպաշտօնական ագենտներ :

Աւագիոն և Փիլմը նույնպես նշանակալից չափով ողագործվում են քրիստոնեական արհմիությունների պրոպագանդայի նպատակով , մանավանդ Հոլանդիայում և Բնելգիայում , վորտեղ քրիստոնեական արհմությունները նույնպես իրենց սեփական ուղիուկայան ունեն : Աւրիշ յերկրներում քրիստոնեական արհմիությունները աղատորեն թույլ են տրվում միկրոֆոնների մոտ և կանոնավոր կերպով չարաթթը միքանի անդամ կազմակերպում են «քանվորութիւնների ժամեր» :

Բացի քրիստոնեական արհմիություններից զոյություն ունեն դարձյալ կանանց բազմաթիվ արհեստական միավորումներ վոչկենտրոնացած բնույթի : Ուրիշակ՝ տան ծառաների , գրասենյակային աշխատավորուհիների միությունները և այլն : Գոյություն ունեն դարձյալ կանանց մի ամրող չարք խոչը կաղմակերպություններ , վորոնք թեև հատկապես աշխատավորների համար չեն ի նկատի առնված , բայց վաստորնեն իրենց նշանակալից մասով նրանցից են կազմված . այլպես և միջազգային բնույթ ունեցող «Յերեսասարդ կանանց քրիստոնեական միությունը» (անգլիերն կրօնական միություն) (ՎՎԿՎ) . վորը ճյուղեր ունի կապիտալիստական աշխարհի բոլոր յերկրներում հարյուր հաղարակոր անդամներով և առանձնապես զարգացման և հասել Ամերիկայում :

### ՎԱՐԺՄՈՒՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐ

Իսկ բնչակե՞ս են իրազործում իրենց խնդիրները ալյալ միություններն ու միավորումները :

Ցեղե բարեգործական կազմակերպությունները շա-

հագործում են մասսաների աղքատությունը , վորպես զինյութական ողնության խոշորակուցական մի պողուն ցթհետ միասին բուրգուական—տերտերական քարողի ձիաբաժնով վարձատրեն , արհեստակցական տիպի կազմակերպություններն ել , վորոնք միացնում են արհեստակցական նշանով բանվորուհիների արհեստակցական շահերը պաշտպանելու համար , իրենց աշխատանքը սոցիալական դիմապայմանը վրա յեն կառուցում : Այդ միությունների ժողովներում և նրանց մամուլի մեջ բարձրանում են որվա չարիք ամենասուր խնդիրներ , աշխատությունների վիճարանվում են դործաղրկության , ուստինալացման , յերեխանների չահարժեման պրոբլեմ . ներ , այդ միությունները խօսպա չեն ժխտում տնտեսական գործադուլը , նրանք թույլ են տալիս իրենց ժամանակ առ ժամանակ հայհոյել կապիտալիստներին և «պարբարի» կոչ անել բանվորուհիներին :

Զարգացնելով իրենց անամոթ և անոկդրունք դեմակադիան , նրանք նրա ծածկույթի տակ կազմակերպում են բանվորուհիներին կապիտալի հետ աշխատակցելու համար , նոր «կամավոր» զոհաբերությունների համար , կապիտալից վորեն պահանջներ անելուց հրաժարվելու համար : Այդ կազմակերպությունները և նրանց լայնորեն ճյուղավարված մամուլը , վորպես գլխավոր փաստարկման կողը են զործ զնում քրիստոնի , աստծու , ավետարանի պատվերները : Նրանք իրենց ծրագիրը կառուցում են այն բանի վրա , վոր զործառելուը (այսպես քնքարար են անվանում նրանք կապիտալիստներին) և զործ ստացողները (այսինքն՝ բանվորները) կարող են բոլոր վիճերի խնդիրները հարթել աստվածաշնչի և քրիստոնեյության «բազալի» վրա , բարի ցանկության համապատասխան չափով :

Պոչ մի բացատրություն մեզ ամելի լավ չի լուսաբանի այդ կազմակերպությունների բնույթը , քան այդ կանեն նրանց իսկ սեփական հրատարակությունները , մանավանդ այնուղ տպագրված քրիստոնեյա-

կան բանվորուհիների «բանթղթակցական» նամակ-ները:

Թե՛ մեկը և թե՛ մյուսը մենք ցույց կտանք գեր-մանական կազմակերպությունների, վորպես ամենա-տիրակ կազմակերպությունների որինակով:

«Ի՞չո՞վ ե մեզ համար կարեոր կիրակին»—հարց-նում ե ափետարանական բանվորուհին: Բանից դուրս ե զալիս, «կիրակին մեր սիրելի բարեկամն ե: Նա մեր հոգնած մարմնին հանդիսում ե տալիս, իսկ մեր ներքին «յամին»—ուրախություն: Կիրակին հիշեցնում ե մեզ այն մասին, թե մենք չափառ ե մոռացության տանք մեր հոգին: Այս «բանթղթակցական» գործնական ցուցումներ ե տալիս, թե ինչպես պետք ե պատրաստվել այդ մեծահանգես որվան:

«Գետք ե պատրաստվել ուրբաթ որվանից. յեթև դուք ուրբաթ որը գլխավոր կարգահավաքը կանեք, չարացի որն արդեն ձագ ասուլու քը շաս կոսա: Շարաթ որը կարելի յե ուտելիք պատրաստել կիրակի որվա համար, լողացնել յերեխաներին, յերեկոյան ամուսինն ել կարող ե մի բանով ողնել. կտեսնես—դեռ ժամանակ ել կա այս ու այն բանի ժամին խոսելու աայրիկի հատ:

Յես ինք շատ տարի աշխատում եմ ֆարբիկայում և վարդել եմ օրշտ այդ ձևով: Կիրակի որերը յես յեր-բեք ծանր աշխատանք չեմի կատարում: Վորպեսուն շաբարված 6 որվա ընթացքում յես ծառայում եմ իմ ձեռնարկատիրոջն իմ ամբողջ ուժերով: Իսկ կիրակի որը յես ծառայում եմ իմ աստծուն»:

Այս յեղբակական խոսքերի մեջ ե կիրակվա՝ վոր-պես կապիտալիստական ստրկության ընդհանուր սիստեմի մի մասի, ամբողջ վիլխովայությունը:

Այստեղից ել բլիսում ե գործազրկության վերա-բերող դրույթը, վորը պատկերացնում են տերսե-րական առաջնորդները, վորպես ինչոյս տարերային ալեւտ, յերկնային պատուհաս, վորը պետք ե տանել մինչև վերջը գլուխը թեի տակը թագցնելով, հույսն աստծու վրա դնելով և չնորհակալ մինելով նրանից

նոեկ այն պակապի համար, վոր նա ուզարկում է մեղ պետության ձեռքով նոպաստի կարգով:

«Գերմանական բանվորուհի» հանդեսի անցյալ տարվա համարներից մեկում մենք խրատական մար-գարիտներ ենք գտնում, վորոնք հրատարակված են, վորպես «բանթղթակցական» նամակներ: Դուք այսպի-սի հայտնություններ եք կարգում:

«Գործազրկ լինելը հետո բան չե: Ով վոր չգի-տե, թե ինչ ե զործազրկությունը, թող բախտավոր հա-մարի իրեն, վորովիետն աշխատանքը հարսություն ե... Մեր ժամանակներում պետք է շատ զորեղ կերպով հավատաս աստծուն, վորպեսպի հոգուրդ արիությունը պահպանես: Գործազրկության համար տրվող պատուանուն ունեմ քիչ ե վոր կրաքար պահպանելու հա-մար հաղիկ ե բավականացնում: Այդ շատ ցավալի բան ե, յեր տեսնում ես, թե վորքան հոգուր կան առաջդ կանգնած: Մեր միությունը (ավետարանական) միակն ե, վոր բազմազնություն ե մտցնում մեր առորելի ժեզ: Այստեղ մենք լսում ենք չափազանց խրատա-կան զեկուցումներ, զրույցներ, այստեղ գիտական դա-ստիսություններ են արվում լուսապատկերներով միասին: Այստեղ ել յերեմն տաք սուրճ ենք խմում, այստեղ կա նաև ուրիշ շատ բան, վորը թեկուզ մեկ ժամ հեռացնում ե մեզ տխուր խորհրդածություննե-րից և հոգսերից: Սակայն հուսանք, վոր այնինի լավ ժամանակներ կան և կիսուրիեն աստծուն, վորպեսպի այդ ժամանակները՝ վորքան հնարավոր ե, ավելի շուտ զան»:

